ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 371-Լ

«13» 04 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 1167-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով.

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» N 1167-Ն հրամանի՝

   1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա և հայցորդություն) կրեդիտային համակարգի ներդրման մասին»,

   2) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 1-ից:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2017 թվականի ապրիլի ....-ի N ....-Ն հրամանի

«Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թվականի հուլիսի 21-ի N 1167-Ն հրամանի

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ) ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Սույն հավելվածով կարգավորվում են հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա և հայցորդություն) կրեդիտային համակարգի ներդրման հետ կապված հարաբերությունները:

2. Ասպիրանտուրայի և հայցորդության կրթական ծրագրերը (այսուհետ՝ Ծրագիր) բաղկացած են երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:

3. Ծրագրի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի (կամ 180 կրեդիտ x 30 ժամ = 5400 ժամ՝ ներառյալ լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք):

4. Ծրագրի 50 կրեդիտը նախատեսվում է կրթական բաղադրիչին, 130 կրեդիտը՝ հետազոտական աշխատանքին:

5. Ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը, գնահատման ձևերը, ուսումնական և հետազոտական բեռնվածությունները բաշխվում են համաձայն սույն հավելվածով սահմանված Ձև N 1-ի:

	ԲԱԺԻՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	ԿՐԵԴԻՏ
	ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ	**50**
ՊԴ.00	**Պարտադիր դասընթացներ և քննություններ**	**30**
ՊԴ.01	Մասնագիտություն. ատենախոսության թեմայի թվանիշով	8
ՊԴ.02	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն	4
ՊԴ.03	Մասնագիտական օտար լեզու	4
ՊԴ.04	Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ	4
Պ.00	Պրակտիկա [1]	10
ԸԴ.00	**Ընտրովի դասընթացներ և ստուգարքներ** [2]	**20**
	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ	**130**
ՀԱ.00	Ատենախոսության թեմայով հրատարակված անհրաժեշտ նվազագույն աշխատություններ [3]	30
ՏԱ.00	Տարեկան ատեստավորումներ	20
ԱԴԵ.00	Ատենախոսություն [4] և թեմա հաստատած հիմնարկի դրական եզրակացությունը ատենախոսության վերաբերյալ	80
ԸՆԴՀԱՆՈՒՐ		**180**

[1] 6-ամսյա աշխատանքային ստաժ ունեցող ասպիրանտն իր ցանկությամբ կարող է չմասնակցել պրակտիկային և կրեդիտները կուտակել ներկայացնելով աշխատաքի վայրից համապատասխան տեղեկանք:

[2] Ասպիրանտների կողմից ընտրովի դասընթացների ընտրությունը կատարվում է համապատասխան ստորաբաժանման (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն) գիտական խորհրդի կողմից հաստատված դասընթացների ցուցակից:

[3] «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» կանոնակարգի 10-րդ կետով սահմանված:

[4] Ատենախոսության 80 կրեդիտը ասպիրանտը ստանում է գիտական աստիճան շնորհելու մասին դրական որոշման դեպքում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս /факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N---------------------------------- <<------>> ------------------------2017թ.

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Հարգելի պարոն/տիկին

Կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարի սույն թվականի ապրիլի 13-ի հմ. 371-Ն հրամանը՝ ի տնօրինություն:

Առդիր՝ 3էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ
(պաշտոնակատար)

Կատ՝ Ս.Դրմեյան
Հեռ՝ 52 56 62